ռասունևհօթն ժողովները փոխանակ վաթսու-նևմէկի՝ սխալները։

Է. Այլ վճռելը թէ՝ կարելի՞ է թոյլ տալ զՄ—նր ——մ——ն+ը իբրև հրահանգ մեր հոգևոր և ծխական դպրոցներում՝, Հայոց Վեհափառ Հայրապետի և Հոգևոր Իշխանութեան իրաւունքն է այդ. և ոչ այլ ումեք։ Ուստի Հայոց համար եղած հրատարակութեանց վերայ՝ թէ եկեղեցական լինի. թէ դասական և թէ այլ նպատակով և բովանդակութեամբ, սոցա պարտք և իրաւունք է հսկել և Հայոց Ազգը զգուշացնել ի կալևոր դէպս։ — Եթէ Պ. Նամակագիրն միանգամ ակնարկէ ցարդ հրատարակեալ իւր հօր մի քանի գրեանց ճակատներուն, անշուշտ ինքնին կհասկանայ իւր սխալը. որով Պ. Մսերի անուան վերայ աւելի նախատինք կբերէ և նոյն իսկ Պ. Մսեր իւր վերայ այնպիսի յանդուգն համարում և համարձակութիւն ունեցած չէ՝ ինչ որ Նամակագիր որդին կուզէ ունենալ տալ և ցուցանել, և ողջամիտ և ուսումնական անձինք քաջ գիտեն յաւէտ սանձարձակ չապաւինել միայն իւրեանց մտաց և կարծեաց վերայ։ — Լաւութեան կյանձնուին Լ———շ——ղի ևն. համար մանկամիտ խօսքերը։

Ը. Նա և այն Մ—նր ——մ——ն+ը երբեք դասագիրք լինելոյ ոչ յարմարութիւն ունի և ոչ մեր դպրոցք այնպիսի դասագրքէ օգուտ կարեն քաղել։ — Դուցէ իբրև նոր հրատարակուած մի բան՝ հետաքրքիր անձանց ուշադրութիւնը շարժելոյ ծառայէ և միանգամ նոցա աչքի տակէն անցնի։

ՅԱՍՏՐԱԽԱՆԷ.

Խօճաջրա—նեան Ուրաշատ ամառաջրոյ.

Աստրախանայ Հայոց ծխական երկսեռ Հոգևոր Դպրոցաց Հոգաբարձութիւնը իւր կարգադրութեան պէս սկիզբն առաւ տարեկան հարցափորձութեանց 13 էն Նախընթաց ամսոյ Յունիսի Ներկայ ամի, և աւարտեց ի 26 նոյն ամսոյ. Երկրորդ դասատներից աւարտեցին սահմանեալ ընթացքը ուսմանց՝ հինգ աղջկունք և մի տղայ. որոնք և արձակեցան խոյսաւ պատշաճեալ վկայականաւ. Ցառաջին դասատներից փոխադրեցան յԵրկրորդ դասատնի՝ ութ աղջկունք և եօթն տղայք, և հարցափորձութեան օրերումը ցուցած յառաջադիմութեանց համար՝ պարգևատրեցան գրենեօք տասն և եօթն երկսեռ ուսանողք։ Զայմանէ Հոգաբարձական խորհրդարանս Աստրախանայ Հոգևոր Երկսեռ Հայոց Դպրոցաց ծանուցանելով Խմբագրութեան՝ խոնարհաբար խնդրում է տպագրել յէջս Արարատ ամսագրոյ՝ յընդհանուր գիտութիւն Ազգասէր և ուսումնասէր համազգայնոց։

Հոգաբարձուք Յովսէփ Աւագ Քահանայ Քուհիաթեանց
Սիմէօն Պօղոսեանց.
Սարգիս Քալբջալեանց.
Գրիգոր Սողոմոնեանց.
Համար 49.
12 Յունվարի 1874 ամի
յԱստրախան.

Նաևեալն հրատարակութիւնը խնդրուած է, զոր և շնորհակալութեամբ արժան կհամարիմք հաղորդել մերազնէից ի գիտութիւն և ի մխիթարութիւն։

Ի ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԷ.

ՀԱՇԻՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՆՈՐ—ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՎԱՍՆ 1873 ԱՄԻ.

Վեցերորդ տարին է, որ Մարդասիրական Ընկերութիւնն իւր հաստատման օրէն սկսեալ մինչև ցայսօր կշարունակէ անխափան իւր ընթացքը և գործողութիւնը։ Վեցերորդ անգամն է այս, որ Խորհրդարանս՝ ըստ ժե յօդուածոյ կանոնադրութեան Ընկերութեան՝ պատիւ ունի առաջի առնել գեր յարգի անդամոց ընդհանուր ժողովոյս իւր տարեկան հաշիւը, յորում բացայայտ կտեսնուին մի ըստ միոջէ Ընկերութեան 1873 թուականի մէջ ունեցած եկամուտքը և ծախքն, որ գոն՝

Ինչպէս կերևնայ հաշուեմատեանէն, որ գործված է ըստ կարգին՝ Ընկերութիւնս ի սկիզբն 1873 ամի ունէր դրամագլուխ՝ յաւելեալ ի ծախուց Նախընթաց ամի 7730 78